ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Դիավանտ ՍՊԸ-ն ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/85 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	E3, Sonoscape Medical Corp.	E3	Sonoscape Medical Corp.	Շարժական ուլտրաձայնային սարքավորում, համալրված առաջադեմ տեխնոլոգիաներով, ինչպիսիք են ամբողջական թվային լայն դիապազոնի ճառագայթի ձևավորումը, բազմալիքային զուգահեռ մշակումը, գունավոր դոպլերը, ուղղորդված էներգետիկ և սպեկտրալ դոպլերը, հյուսվածքային հարմոնիկ պատկերավորումը, աղմուկի նվազեցման, տարածական համադրման, տրապեցանման պատկերավորումը: Կիրառման ոլորտներ. Որովայինային, սրտաբանական, կմախքամկանային և հոդային հետազոտություններ, վահանագեղձ, տրանսկրանիալ, փոքր մասնիկների և անոթներ դուպլեքս հետազոտություններ: Ցուցադրման էկրան. Բարձր թողունակության գունավոր Հեղուկ-բյուրեղային՝ 15,6 դույմ: Ներկառուցված մարտկոց 90 րոպե առանց հոսանք աշխատանքի համար:

				Սկանավորման մեթոդները՝ Էլեկտրոնային կոնվեքս, Էլեկտրոնային գծային, Էլեկտրոնային սրտաբանական ֆազային: Պատկերման ռեժիմներ՝ 2D (B ռեժիմ), B ռեժիմի ավտոմատ կարգավորում, M-ռեժիմ, իմպուլս և անընդհատ ալիքային ռեժիմ PW/CW, գունավոր դոպլեր (CDI), հյուսվածքային հարմոնիկ ռեժիմ (THI), էներգետիկ դոպլեր և ուղղորդված էներգետիկ դոպլեր պատկերավորում (PDI/DPDI), տրապեցանման պատկերավորում: Ցուցադրման ռեժիմների համակցում. 256 մոխրագույնի մակարդակ, 2B ռեժիմ, 4B ռեժիմ, B + CDI, B + PDI, B + M, B + PW, B + CDI + PW, B + PDI + PW, B + CW, B + CDI + CW, B + PDI + CW: Հարմոնիկ պատկերավորում - բոլոր տվիչների հետ ակտիվացման հնարավորություն: Յուրաքանչյուր տվիչի և սկանավորման յուրաքանչյուր ռեժիմի համար երեք ընտրովի հաճախականություններ: Անհատական ռեժիմներում պատկերի ստացման ալգորիթմի օպտիմալացման և աղմուկի նվազեցման հնարավորություն: Անատոմիական կառուցվածքների հայտնաբերումը բարելավելու համար օպտիմալացման առկայություն: Տրապեցանման պատկերավորում բոլոր գծային տվիչների օգնությամբ, կրծքագեղձի, անոթների, կմախքա-մկանային և վահանագեղձի պատկերովորման ռեժիմներում կիրառման համար: Տվիչի միաժամանակ միացման համար ակտիվ պորտերի քանակ՝ 3: Պատկերի ձևաչափը. Ամբողջական, բաժանված, բազմակի, ձախ / աջ, վերև / ներքևի պատկերավորում: B ռեժիմ. Ուլտրաձայնի ուժեղացում՝ կարգավորվող, Խորությունը 40 սմ, Դինամիկ տիրույթը 180 դբ:

				Ավտոմատ օպտիմալացման առկայություն, իմպուլս-ալիքային ռեժիմում արագության միջակայքը 0,01-12 մ/վ, PRF հաճախականությունը 1-16ԿՀց: Անընդհատ ալիքային դոպլեր ռեժիմում արագության՝ 0,01-42 մ/վ, PRF հաճախականությունը՝ 1-50ԿՀց: Չափումներ և հաշվետվություններ. Բոլոր ստանդարտները B, M և դոպլեր ռեժիմներում: Որովայնի խոռոչ, կրծքագեղձ, սրտաբանություն, գինեկոլոգիա, մանկաբարձական, մանկաբուժական, փոքր մասեր, վահանագեղձ, տրանսկրանիալ, անոթային, ստանդարտ կենսաչափության հաշվետվություններ և օգտագործողի կողմից ընտրովի հաշվետվություններ, բոլոր հաշվետվությունները ավտոմատ կերպով պահվում են համակարգում: Էլեկտրաէներգիայի սնուցումը `220Վ / 50Հց: Տվիչների լրակազմը. Էլեկտրոնային կոնվեքս. հաճախականությունների տիրույթը 1-7 ՄՀց, բացվածքը ` 50 մմ; Էլեկտրոնային գծային. հաճախականությունների տիրույթը 4-16 ՄՀց, բացվածքը՝ 50 մմ; Էլեկտրոնային ֆազային սրտաբանական տվիչ. Հաճախականությունների տիրույթը 1-6 ՄՀց, Բացվածքը՝ 90 աստիճան: Հավաքածուն ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ պարագաները `սարքավորման ամբողջական գործարկման համար, ներառյալ համապատասխան տակդիր անիվների վրա: Ստանդարտներ (փաստաթղթային ապացույց (վկայականների պատճեն), ISO13485, MDR (EU 2017/745): Համակարգի կարգաբերումը և ուսուցումը սերտիֆիկացված մասնագետի կողմից իրականացնում է Վաճառողը: Սարքը նոր է, չօգտագործված, երաշխիքը՝

				12 ամիս:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Диавант в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/85 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
11				